

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՐՈՅԱՆ ԿԱՐԵՆ ԻՇԽԱՆԻ

ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ը.00.02- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2022

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ պետական կառավարման
ակադեմիայում

Գիտական ղեկավար՝

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Վիլեն Վիկտորի Խաչատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Միքայել Սերգեյի Մելքունյան

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Գևորգ Ֆերդինանտի Կիրակոսյան

Առաջատար կազմակերպություն՝

Հայ-ռուսական համալսարան


Ատենախոսություն պաշտպանությունը կայանալու է 2022 թ. հուլիսի 12-ին, ժամը
13:30-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի
տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցե՝ 0009, ք. Երևան, Աբովյան փող. 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թվականի մայիսի 30-ին:

**ՀՀ ԲՈԿ-ի Տնտեսագիտության 015 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար**

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝



Ա. Լ. Հակոբջանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հարկային բեռը և տնտեսական աճը մշտապես բարդ փոխազդեցության մեջ են գտնվում: Մի կողմից հարկային բեռի բարձրացումը խոչընդոտում է տնտեսավարող սուբյեկտների ձեռնարկատիրական գործունեությանը և հանգեցնում տնտեսական ակտիվության թուլացման, մյուս կողմից՝ բարձր հարկային բեռը մեծացնում է պետական եկամուտները, որոնք ուղղվում են պետական ծախսերին և բազմարկչի ազդեցությամբ մեծացնում տնտեսական աճը: Այս տեսանկյունից ներկայումս մեծ կարևորություն է ստանում ՀՀ-ում հարկային բեռի օպտիմալ մակարդակի գնահատումը, այսինքն՝ հարկային բեռի այն մակարդակի, որն ապահովում է հարկային եկամուտների և համախառն արտադրության ծավալի այնպիսի լավագույն համադրություն, որի դեպքում հարկային բեռի մակարդակի սահմանային կամ լրացուցիչ տոկոսային աճն արսեն կհանգեցնի բացասական տնտեսական աճի: Ուստի, թեմայի արդիականությունը հիմնավորվում նշված հանգամանքով:

Ի թիվս վերը նշվածի, կա ևս մեկ կարևոր հանգամանք նշված թեմայի վրա կանգ առնելու համար: ՀՀ պետական պարտքը շարունակական աճում է և դրան զուգահեռ մոտենում է նախկինում կուտակված պարտքի սպասարկման ժամանակը, ինչը պետությանը դրդում է մեծացնել հարկային բեռի մակարդակը՝ հարկային եկամուտների բազայի ավելացման միջոցով: Այս ամենն անշուշտ առաջ է բերում հարկային բեռի արդյունավետ կառավարման հիմնախնդիր, որի շրջանակներում մեծ կարևորություն են ստանում ճիշտ մշակված օրենսդրական փոփոխությունները, որոնց նպատակը պետք է լինի հարկային մուտքերի ծավալների ընդլայնումը՝ տնտեսության վրա հնարավոր նվազագույն բացասական ազդեցություն կիրառելով:

Այս ամբողջը հաշվի առնելով՝ կարծում ենք, որ մեր կողմից քննարկվող թեման ներկայումս ավելի քան արդիական է:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է ՀՀ-ում հարկային բեռի կառավարման և տնտեսական աճի փոխազդեցության մեխանիզմների բացահայտումը: Նշված նպատակին հասնելու համար հետազոտությունում առաջ են քաշվել և լուծվել հետևյալ խնդիրները.

1. Ի մի է բերվել հարկային բեռի և տնտեսական աճի վերաբերյալ տնտեսագիտության մեջ առկա կարևոր մոտեցումները, ինչպես նաև հարկային բեռի գնահատման և կառավարման հիմնական առանձնահատկությունները:

2. Քննարկվել է առանձին երկրների հարկային համակարգերի միջազգային փորձը՝ միաժամանակ զուգահեռ անցկացնելով ՀՀ հարկային համակարգի հետ:

3. Ուսումնասիրության է ենթարկվել ՀՀ հարկային համակարգը, դրա հիմնական առանձնահատկությունները, ինչպես նաև դրա դերը հարկային բեռի ձևավորման և կառավարման գործում:

4. Հարկային բեռի իրական մակարդակը որոշելու նպատակով կառուցվածքային հավասարումների մոդելավորման MIMIC մոդելի միջոցով գնահատվել է ՀՀ-ում ստվերային տնտեսության մակարդակը և ուսումնասիրվել է հարկային արտոնությունների մասնաբաժինը ՀՆԱ-ում:

5. Տնտեսության վրա հարկային օրենսդրության մեջ տեղի ունեցած փոփոխությունների ազդեցությունը վերլուծելու նպատակով տնտեսաչափական SVAR մոդելի միջոցով գնահատվել է ՀՆԱ-ի ծախսային բազմարկիչների մեծությունները:

6. Դիտարկվել են ՀՀ առանձին հարկատեսակները, դրանց գծով հարկային բեռի ազդեցությունը տնտեսության վրա, ինչպես նաև էկոնոմետրիկական մոդելի միջոցով գնահատվել է ընդհանուր հարկային բեռի և տնտեսական աճի միջև փոխազդեցությունը:

Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել հետազոտվող թեմայի վերաբերյալ առանձին տնտեսագիտական դպրոցների ներկայացուցիչների ուսումնասիրությունները, հայաստանյան և օտարերկրյա հեղինակների գիտական աշխատությունները, միջազգային տարբեր կազմակերպությունների հրապարակած զեկույցները, առանձին մասնագիտական հոդվածները, ՀՀ հարկային օրենսդրությունը, ինչպես նաև հետազոտվող թեմային առնչվող այլ նյութեր:

Հետազոտության համար որպես տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ վիճակագրական կոմիտեի տարեգրքերը, վիճակագրական տեղեկագրերը, ՀՀ կենտրոնական բանկի վիճակագրական հրապարակումները, պարբերականները, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տարեկան հաշվետվությունները, հարկային վիճակագրական տվյալները, Համաշխարհային բանկի և այլ միջազգային կառույցների վիճակագրական նյութերը և այլ մասնագիտական տեղեկատվական աղբյուրները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են գիտական վերացարկման, մաթեմատիկական, վիճակագրական, այլ հավասար պայմանների, վերլուծության, ինչպես նաև պատմականի ու տրամաբանականի մեթոդները:

Հետազոտության գիտական արդյունքները և նորույթը: Հետազոտության շրջանակներում բացահայտվել է իրական հարկային բեռի մեծությունը ՀՀ-ում, ցույց է տրվել, թե ինչպես կարելի է արդյունավետ

կառավարել հարկային բեռը, երբ հարկային օրենսդրության մեջ տեղի է ունենում փոփոխություն: Այնուհետև, տնտեսաչափական մոդելով գնահատվել է հարկային բեռի և տնտեսական աճի միջև փոխազդեցությունը: Նշված ուսումնասիրությունների և վերուձությունների հիման վրա ստացվել են տեսական և կիրառական նշանակության որոշ գիտական արդյունքներ, որոնցից գիտական նորույթի իմաստ կրող դրույթները կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

Առաջ է քաշվել իրական հարկային բեռի գաղափարը, որի մեծության հաշվարկման շրջանակներում կառուցվածքային հավասարումների մոդելավորման MIMIC մոդելի միջոցով՝ նոր մոտեցումով, գնահատվել է ստվերային տնտեսության մակարդակը ՀՀ-ում 2001-2021թթ. ժամանակահատվածում (64-75 էջեր):

Տնտեսաչափական SVAR մոդելի միջոցով գնահատվել է հարկաբյուջետային բազմարկիչների մեծությունը ՀՀ-ում, որոնց միջոցով ցույց է տրվել, թե ինչպես արդյունավետորեն կառավարել հարկային բեռը՝ հարկային օրենսդրության մեջ տեղի ունեցող փոփոխության ժամանակ (90-99 էջեր):

Տարբեր կառուցվածքային մոդելների միջոցով գնահատվել է առանձին հարկատեսակների գծով հարկային բեռի՝ տնտեսական աճի վրա ունեցած ազդեցության բնույթը ՀՀ-ում, ինչի արդյունքում պարզվել է, որ շահութահարկի, ԱԱՀ-ի, ինչպես նաև շրջանառության հարկի գծով հարկային բեռը հիմնականում բացասաբար է ազդում տնտեսության վրա, մինչդեռ ակցիզային հարկի, բնապահպանական հարկի, և որոշ դեպքերում նաև եկամտային հարկի գծով հարկային բեռը մեծամասամբ դրական ազդեցություն կարող է գործել տնտեսության վրա (107-112 էջեր):

Հարկային բեռի և տնտեսական աճի փոխազդեցության շրջանակներում տնտեսաչափական մոդելի միջոցով գնահատվել է օպտիմալ հարկային բեռի մեծությունը ՀՀ-ում, ինչի արդյունքում պարզվել է, որ ՀՀ-ում հարկային բեռի մակարդակը ցածր է իր օպտիմալ մակարդակից (118-128 էջեր):

Հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը: Առենախոսության մեջ տեղ գտած կարևոր մտքերն ու գաղափարները, ինչպես նաև հիմնական գիտական արդյունքները կարող են խորհրդատվական հիմք ծառայել պետության կողմից մշակվող հարկային քաղաքականության կատարելագործման, հարկային բեռի արդյունավետ կառավարման, ինչպես նաև առկա հարկային բեռն իր օպտիմալ մակարդակին հասցնելու համար: Առենախոսությունում տեղ գտած որոշ մտքեր կարող են հետաքրքրություն ներկայացնել նաև տվյալ թեմայով զբաղվող ինչպես հայաստանյան, այնպես էլ օտարերկրյա հետազոտողների, համալսարանների ուսանողների և այլ անձանց համար:

Ատենախոսությունների արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական դրույթները և գիտական արդյունքները քննարկվել են ՀՀ ՊԿԱ կառավարման ամբիոնի նիստերի ընթացքում:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթները ամփոփված են հեղինակի կողմից հրապարակված յոթ գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից, ինչպես նաև հավելվածներից: Ատենախոսությունը բաղկացած է 146 էջից (առանց հավելվածների) և ներառում է 22 աղյուսակ, 18 գծապատկեր և 11 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածության** մեջ հիմնավորվել է հետազոտվող թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են հետազոտության գիտական արդյունքները և նորույթները, դրանց տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև դրանց փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության թեմայի **առաջին՝ «Հարկային բեռի տեսական և մեթոդաբանական հիմքերը»** գլխում ժամանակագրական կարգով ներկայացվել է հարկերի և տնտեսական աճի վերաբերյալ տարբեր տնտեսագիտական ուղղությունների, դպրոցների և առանձին հեղինակների բնորոշումները, ուսումնասիրվել է հարկային բեռի գնահատման և կառավարման առանձնահատկությունները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր երկրում հարկային բեռի ձևավորման և կառավարման հիմքում ընկած է տվյալ երկրի հարկային համակարգը, ուստի առաջին գլխում անդրադարձ է կատարվել է նաև հարկային համակարգերի միջազգային փորձի ուսումնասիրությանը՝ քննարկելով Ռուսաստանի, Գերմանիայի և Վրաստանի հարկային համակարգերը և դրանց հիմնական առանձնահատկությունները:

Առաջին գլխում ուսումնասիրությունը եզրափակվել է ՀՀ հարկային համակարգի քննարկումով: Այստեղ ներկայացվել է ՀՀ հարկային համակարգի հիմնական առանձնահատկությունները, քննարկվել է հարկային համակարգի

հիմքը կազմով հարկային օրենսդրությունը, դրա ազդեցությունը ՀՀ հարկային բեռի ձևավորման և փոփոխության վրա, ինչպես նաև անդրադարձ է կատարվել այն միջոցառումներին, որոնցով ՀՀ հարկային համակարգը արձագանքել է կորավիրուսային համաճարակի և 44-օրյա պատերազմի թողած բացասական տնտեսական հետևանքներին:

Ատենախոսության թեմայի **երկրորդ՝ «ՀՀ իրական հարկային բեռի գնահատումը և հարկային օրենսդրության փոփոխության հետևանքների վերլուծությունը ՀՀ տնտեսությունում»** գլխում գնահատվել է իրական հարկային բեռի մակարդակը ՀՀ-ում, ինչպես նաև իրականացվել է ՀՀ տնտեսության վրա հարկային օրենսդրության փոփոխության հետևանքների վերլուծություն:

Հարկային բեռի արդյունավետ կառավարման նպատակով նախառաջ կարևոր է ճշգրիտ վերլուծել հարկերի՝ տնտեսության վրա ունեցած իրական ազդեցությունը: Տնտեսության վրա հարկային բեռի ազդեցությունը ճշգրիտ ներկայացնելու համար տրվում է իրական հարկային բեռի գաղափարը՝ առաջարկելով հարկային բեռի գնահատման նոր մոտեցում (հարկային բեռը հաշվարկելիս ՀՆԱ-ից բացառելով ստվերային տնտեսության մակարդակը և հարկային արտոնություններով ձևավորված եկամուտները)¹

$$\text{Հարկային բեռ} = \frac{\text{Հարկային եկամուտներ և վճարներ}}{\text{ՀՆԱ - Ստվերային տնտեսություն - Հարկախի արտոնություններ}} * 100\%$$

Իրական հարկային բեռը գնահատելու համար, անհրաժեշտ է, նախ և առաջ, գնահատել ստվերային տնտեսության մակարդակը:

ՀՀ ստվերային տնտեսությունը գնահատելու համար մենք օգտագործել ենք «Multiple Indicators and Multiple Causes» (MIMIC) մոդելը:

Մոդելում ներառված են ստվերային տնտեսության առաջացման և զարգացման այն հնարավոր պատճառները և ցուցիչները, որոնք տեսականորեն ներհատուկ են ՀՀ տնտեսությանը:

Համեմատական սկզբունքով մոդելի որակը բարձրացնելու համար մեր կողմից ընտրվել են մոդելի մի քանի ձևափոխություններ՝ «6-1-3¹», «7-1-2», «6-1-2», «5-1-2», որոնցից յուրաքանչյուրի համար ստացվող մոդելի արդյունքները ամփոփ տեսքով ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

¹ «6-1-3»-ը նշանակում է որ մոդելը ընդգրկում է 6 պատճառ փոփոխական, 1 լատենտ փոփոխական և 3 ցուցիչ փոփոխական:

Աղյուսակ 1.


MIMIC մոդելի արդյունքներն ըստ առանձին ձևափոխությունների

MIMIC մոդել	6-1-3	7-1-2	6-1-2	5-1-2
Պատճառ փոփոխականներ				
Գործազրկության մակարդակ	0.07	-0.06	-0.08	-0.08
Ինֆլացիայի մակարդակ		-0.09	-0.09	-0.1
Առևտրի ազատության մակարդակ	0.03	0.05	0.01	
Կոռուպցիայի վերահսկման ցուցանիշ	- 0.33*** ²	-0.58	-0.59***	-0.59***
Օրենքի գերակայություն մակարդակ	-0.52***	-0.29	-0.32***	-0.32***
Քիզնես ազատության ցուցանիշ	-0.08	-0.05	-0.07	-0.08
Տնտեսական ազատության ցուցանիշ	-0.30***	-0.16	չկա	չկա
Ցուցիչ փոփոխականներ				
Mo ազրեգատ/Mi ազրեգատ	0.80***	0.89***	0.92***	0.93***
Հարկային եկամուտներ/ՀՆԱ	-0.98***	չկա	չկա	չկա
Զբաղվածության մակարդակ	-0.66***	-0.61***	-0.6***	-0.59***
Վիճակագրական թեստեր				
Chi-square [p > chi2] ³	42.73 [0.0000]	13.42 [0.0368]	9.86 [0.0793]	5.25 [0.2629]
Դիտարկումների քանակ	79	79	79	79

Օգտագործելով վերոնշյալ արդյունքները և «5-1-2» ձևափոխությամբ մոդելի վիճակագրորեն նշանակալի պատճառ փոփոխականների համապատասխան ժամանակաշրջանի արժեքային տվյալները՝ ստացել ենք ՀՀ սովետային տնտեսության ծավալը 2001-2020թթ. ժամանակահատվածի համար:

² *** p<0.01 , ** P<0.05, * p<0.1.

³ Ըստ էսի-քառակուսի ցուցանիշի՝ եթե p-ի արժեքը մեծ է 0.05-ից, ապա մոդելը նշանակալի է:



Գծապատկեր 1. ՀՀ ստվերային տնտեսության գնահատված մակարդակը 2001-2020թթ. համար, տոկոսով⁴

Սկսած 2015 թվականից ՀՀ ֆինանսների նախարարությունը գնահատել է հարկային արտոնությունների հետևանքով պետական բյուջե չգանձվող (պակաս գանձվող) հարկային եկամուտները՝ համարելով այն որպես հարկային ծախս:

Աղյուսակ 2. Հարկային ծախսերի գնահատականը 2015-2020թթ.⁵

Տարի	2015	2016	2017	2018	2019	2020
Հարկային ծախսերի չափը, մլն. դրամով	340,291	381,490	364,356	395,490	442,261	457,407
Կշիռը ՀՆԱ-ի մեջ, %	6.99	7.00	6.74	6.76	6.55	6.45

Ունենալով ստվերային տնտեսության և հարկային ծախսերի տվյալները, հաշվարկել է իրական հարկային բեռը ՀՀ-ում 2015-2020թթ. համար.

⁴ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ ՀՀ-ում ստվերային տնտեսության գնահատված տվյալների հիման վրա:

⁵ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից ՀՀ ֆինանսների նախարարության հրապարակած՝ հարկային ծախսերի գնահատված տվյալների հիման վրա, Տե՛ս 2015թ. -ի և հետագա տարիների՝ «ՀՀ պետական բյուջեի մասին օրենք»-ները:

Աղյուսակ 3.

Իրական հարկային բեռը ՀՀ-ում 2015-2020թթ.⁶

Տարի	2015	2016	2017	2018	2019	2020
Հարկ և տուրք, մլն. դրամով	1067888.8	1079689.1	1158088.4	1257896.2	1463940.1	1385205.5
ՀՆԱ, մլն. դրամով	5043633.2	5067293.5	5564493.3	6017035.2	6569030.8	6183742.1
Ստվերի ծավալ, մլն. դրամով	1568569.9	1565793.7	1719428.4	1624599.5	1464893.9	1391342.0
Հարկային ծախս, մլն. դրամով	340291.0	381490.0	364356.0	395490.0	442261.0	457407.0
Գործող հարկային բեռ, %	21.17%	21.31%	20.81%	20.91%	22.37%	22.41%
Իրական հարկային բեռ, %	34.07%	34.61%	33.27%	31.47%	31.40%	31.95%

Հարկային բեռն իր պլանավորված մեծությանը բերելու և հարկային բեռի կառուցվածքում փոփոխություններ կազմակերպելու համար անհրաժեշտություն է առաջանում կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ: Այս ամենը, անշուշտ, պահանջում է հարկային բեռի կառուցվածքի փոփոխության գնահատում, որի նպատակն է քանակապես չափել, թե հարկային օրենսդրության փոփոխությունն ինչպես է ազդում տնտեսության վրա, երբ հարկային մուտքերի կազմում ակնկալվում են փոփոխություններ:

Տնտեսական աճի վրա հարկային բեռի փոփոխության հնարավոր հետևանքները տեսական, այնուհետև գործնական մակարդակով վերլուծելու ամենահարմար եղանակը դա Քեյնսյան ամբողջական պահանջարկի մոդելի կիրառումն է՝ հիմքում դնելով հավասարակշռված բյուջեի գաղափարը: Դրա էությունը կայանում է նրանում, որ ՀՆԱ-ն արտահայտվում է երեք ծախսային բաղադրիչներով՝ սպառման, ներդրումների և պետական ծախսերի և, որտեղ, պետական ծախսերի ցանկացած փոփոխություն հնարավոր է միայն հարկային եկամուտների փոփոխության պարագայում՝

$$Y=C+I+G \text{ (1), որտեղ՝}$$

⁶ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ ՀՀ-ում գործող հարկային բեռի, հարկային արտոնությունների և ստվերային տնտեսության գնահատված տվյալների հիման վրա՝ 2015-2020թթ.:

Y-ը՝ ՀՆԱ-ն է, C-ն՝ սպառման ծախսերը, I-ն՝ ներդրումային ծախսերը, իսկ G-ն՝ պետական ծախսերը:

25.06.2019թ. ընդունված ՀՀ ՀՕ-68-Ն օրենքով հարկային օրենսգրքում կատարվեցին մի շարք էական փոփոխություններ: Այստեղ, դիտարկվել են, մասնավորապես՝ տնտեսության վրա եկամտային հարկի համահարթեցման և շահութահարկի դրույքաչափի փոփոխության հնարավոր ազդեցությունները:

Եկամտային հարկի համահարթեցման հետևանքով, նախ և առաջ նվազում են հարկային եկամուտները, հետևաբար, նաև՝ պետական ծախսերը: Դրան միաժամանակ, ավելանում են սպառման ծախսերը, քանի որ, եկամտային հարկի համահարթեցումը վերաբերում է բացառապես վարձու աշխատողներին, ուստի, տվյալ իրավիճակում տեղի է ունենում ՀՆԱ-ի ծախսային մասի վերաբաշխում՝ պետական ծախսերից դեպի սպառման ծախսեր, որն իր համապատասխան ազդեցությունն է գործում ՀՆԱ-ի վրա՝ միաժամանակ ազդելով նաև ՀՆԱ-ի մնացած բաղադրիչների վրա: Խնդիրը կայանում է նրանում, թե ինչպիսի ազդեցություն կունենա տնտեսության վրա ծախսային մի բաղադրիչի փոփոխությունը մյուսի ավելացման հաշվին: Դրա համար անհրաժեշտ է գնահատել ծախսային բազմարկիչների մեծությունները:

Բազմարկիչի մեծությունը գնահատելու համար մենք օգտագործել ենք Բլանշարդի և Պերոտտի կողմից առաջարկված SVAR մոդելի գործիքակազմը: Կրճատ տեսքի VAR սպեցիֆիկացիան ունի հետևյալ տեսքը՝

$$X_t = A(L)X_{t-1} + U_t \quad (2), \text{ որտեղ՝}$$

$X_t = [T_t, C_t, I_t, G_t, Y_t]$ – ն էնդոգեն փոփոխականների՝ համապատասխանաբար հարկային եկամուտների, համախառն սպառման, համախառն ներդրումների, պետական ծախսերի և ՀՆԱ-ի լրգարիթմական արժեքների վեկտորն է ժամանակի t պահին:

- $U_t = [u_t, c_t, i_t, g_t, y_t]$ -ն կրճատ տեսքի մնացորդների վեկտորն է, ինչը կարելի է ներկայացնել հարկերի, համախառն արտադրության (ՀՆԱ-ի), համախառն սպառման, պետական ծախսերի և համախառն ներդրումների կառուցվածքային շղկերի գծային կոմբինացիաների տեսքով՝

$$t_t = a_1 y_t + a_2 c_t + a_3 i_t + a_4 e_t^s + e_t^t \quad (3),$$

$$c_t = b_1 i_t + b_2 y_t + b_3 e_t^t + b_4 g_t + e_t^c \quad (4),$$

$$i_t = c_1 c_t + c_2 y_t + c_3 e_t^t + c_4 g_t + e_t^i \quad (5),$$

$$y_t = d_1 t_t + d_2 c_t + d_3 i_t + d_4 g_t + e_t^y \quad (6),$$


$$g_t = f_1 c_t + f_2 y_t + f_3 e_t^t + f_4 i_t + e_t^g \quad (7)$$

SVAR մոդելի կառուցման առանցքային նպատակը ծախսային շղկերի իմպուլսային արձագանքների ստացումն է, որոնք հնարավորություն են տալիս նույնականացնել ծախսային շղկերի զուտ ազդեցությունները տնտեսության վրա


և ստանալ համախառն սպառման, համախառն ներդրումների և պետական ծախսերի բազմարկիչների գնահատված արժեքները:

Նշված իմպուլսային արձագանքի ֆունկցիաները ներկայացված են գծապատկեր 2.2.4-ում.


ՀՆԱ իմպուլսային արձագանքը սպառման շուկին



ՀՆԱ իմպուլսային արձագանքը ներդրումների շուկին



ՀՆԱ իմպուլսային արձագանքը պետական ծախսի շուկին



Գծապատկեր 2. ՀՆԱ-ի իմպուլսային արձագանքը ծախսային շուկերին

Վերը բերվածը ավելի պարզ կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևի միջոցով՝

$$GDP=0.68C+0.08I+0.04G \quad (8), \text{ որտեղ՝}$$

GDP-ն, C-ն, I-ն և G-ն, համապատասխանաբար ՀՆԱ-ի, սպառման, ներդրման և պետական ծախսերի մեծություններն են: Որպեսզի ցույց տանք, թե ինչ հնարավոր ազդեցություն կունենան հարկային օրենսգրքում կատարվող փոփոխությունները տնտեսության վրա, ենթադրենք, որ նշված

փոփոխություններն ուժի մեջ մտնելու ժամանակահատվածում կառավարությունը որոշում է կայացրել՝ պլանավորել հավասարակշռված բյուջե, այն է՝ պետական ծախսերը համապատասխանեցնել հավաքագրվող եկամուտներին: Տվյալ դեպքում, հարկային եկամուտներում ակնկալվող ցանկացած ավելացում կողղվի պետական ծախսերին, իսկ նվազեցում՝ կհանգեցնի պետական ծախսերի կրճատման:

$$\text{GDP}=\mathbf{0.68C+0.08I+0.04T \text{ (9)}}$$
, որտեղ՝

T-ն հարկային եկամուտների մակարդակն է:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իրականացված վերլուծությունների արդյունքում եկամտային հարկի համահարթեցման հետևանքով 2020թ.-ին պետական բյուջե հավաքագրվող եկամուտների կորուստն ակնկալվում է 26,2 միլիարդ դրամ: Ելնելով մեր այն ենթադրությունից, որ բյուջեն հավասարակշռված է, կառավարությունը պետք է կրճատի պետական ծախսերը՝ G-ն, 26.2 միլիարդ դրամի չափով: Մյուս կողմից, վերլուծելով եկամտային հարկի համահարթեցման հնարավոր հետևանքները, մենք եկանք այն եզրահանգման, որ դրանից մեծամասամբ շահում են վարձու աշխատողները (ենթադրենք նույն չափով ավելացնելով իրենց սպառումը՝ C-ն): Ունենալով ծախսային բազմարկիչների գնահատված մեծությունները, մենք այժմ կարող են համադրել առկա կորուստներն ու օգուտները և, միաժամանակ քանակապես գնահատել եկամտային հարկի համահարթեցման ազդեցությունն ամբողջ տնտեսության վրա: Այս ամենը կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևի միջոցով.

$$\Delta\text{GDP}=\mathbf{0.68\Delta C+0.04\Delta G \text{ (10)}}$$
, որտեղ՝

Δ-ն ցույց է տալիս նշված ցուցանիշների փոփոխությունը: Տեղադրելով համապատասխան ցուցանիշները բանաձևում, մենք ստանում ենք, որ եկամտային հարկի համահարթեցման արդյունքում ակնկալվում է ՀՆԱ-ի աճ՝ 16,768 միլիարդ դրամի չափով:

Այլ է խնդիրը շահութահարկի դրույքաչափի փոփոխության ժամանակ: Շահութահարկի դրույքաչափի փոփոխության հետևանքով տեղի է ունենում պետական ծախսերի վերաբաշխում ի օգուտ ներդրումային ծախսերի, այսինքն՝ հարկային եկամուտները վերաբաշխվում են ի օգուտ ռեզիդենտ շահութահարկ վճարողների և մշտական հաստատության միջոցով ՀՀ գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների, որոնք դրանք ուղղում են ներդրումային ծախսեր կատարելուն (ենթադրենք նույն չափով ավելացնելով իրենց սպառումը՝ I-ն): ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական բազայում առկա տվյալների համադրման արդյունքում շահութահարկի դրույքաչափի փոփոխության հետևանքով 2021թ.-ին պետական բյուջե

հավաքագրվող եկամուտների կորուստն ակնկալվում է 14 միլիարդ դրամ⁷: Ելնելով մեր այն ենթադրությունից, որ բյուջեն հավասարակշռված է, կառավարությունը պետք է կրճատի պետական ծախսերը՝ G-ն, 14 միլիարդ դրամի չափով: Համադրելով առկա կորուստներն ու օգուտները, կարելի է գնահատել շահութահարկի դրույքաչափի փոփոխության ազդեցությունն ամբողջ տնտեսության վրա: Այս ամենը կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևի միջոցով՝

$$\Delta GDP = 0.08\Delta I + 0.04\Delta G \quad (11)$$

Տեղադրելով համապատասխան ցուցանիշները բանաձևում, մենք ստանում ենք, որ շահութահարկի դրույքաչափի փոփոխության արդյունքում ակնկալվում է ՀՆԱ-ի աճ 0,56 միլիարդ դրամի չափով:

Ելնելով ծախսային բազմարկիչների գնահատված մեծություններից և հաշվի առնելով մեր կողմից կատարված նախնական սահմանափակումները, կարող ենք ենթադրել, որ ինչպես եկամտային հարկի համահարթեցման, այնպես էլ շահութահարկի դրույքաչափի փոփոխության արդյունքում ՀՀ տնտեսությունում ակնկալվում է դրական տեղաշարժ՝ ՀՆԱ-ի աճի տեսքով:

Ատենախոսության թեմայի երրորդ՝ «ՀՀ տնտեսության վրա հարկային բեռի ազդեցության գնահատումը» գլխում սկզբում գնահատվել է առանձին հարկատեսակների գծով հարկային բեռի ազդեցությունը ՀՀ տնտեսություն վրա, այնուհետև նույնը կատարվել է ընդհանուր հարկային բեռի գծով՝ վերլուծելով օպտիմալ հարկային բեռը ՀՀ-ում:

Հարկատեսակների, պետական ծախսերի և տնտեսական աճի միջև կոռելյացիոն կապը մոդելավորված է հետևյալ հավասարմամբ՝

$$\Delta y_t = b_0 + \sum b_{it} \cdot \Delta T_{it} + b_2 \cdot \Delta X_t + \varepsilon_{it} \quad (12), \text{ որտեղ՝}$$

Δy_t -ն ՀՀ ՀՆԱ աճի ցուցանիշն է ժամանակի t պահին, b_0 -ը գնահատման ենթակա անկյունային գործակիցն է, b_{it} -ը i-րդ հարկատեսակի գծով հարկային բեռի՝ տնտեսության վրա ազդեցությունը բացատրող գործակիցն է⁸, b_2 -ը ՀՀ պետական համախառն ծախսեր/ՀՀ ՀՆԱ հարաբերական ցուցանիշի՝ տնտեսության վրա ազդեցությունը բացատրող գործակիցն է, ΔT_{it} -ն – i-րդ հարկատեսակի գծով հարկային բեռի աճի ցուցանիշն է ժամանակի t պահին⁹,

⁷ ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների գնահատման համաձայն՝ շահութահարկի 20% դրույքաչափի դեպքում ռեզիդենտ շահութահարկ վճարողների և մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների կողմից վճարման ենթակա շահութահարկը կանխատեսվում էր 140 մլրդ դրամ, հետևաբար, երբ շահութահարկի դրույքաչափը նվազի 10%-ով՝ դառնալով 18%, նույն չափով կնվազի շահութահարկ վճարողների կողմից վճարման ենթակա ակնկալվող շահութահարկը, որը կկազմի 14 մլրդ դրամ:

⁸ $i=1, n$, որտեղ n-ը մոդելում ներառված հարկատեսակների թիվն է:

⁹ Կախված մոդելի սպեցիֆիկացիայից՝ հարկատեսակների գծով հարկային բեռի ցուցանիշի աճը հաշվարկվել է կամ տվյալ հարկատեսակի գծով հարկային համախառն եկամուտ/ՀՆԱ հարաբերական

ΔX-ն ՀՀ պետական համախառն ծախսեր/ՀՀ ՀՆԱ հարաբերական ցուցանիշի աճի ծավալն է ժամանակի t պահին, իսկ ϵ_t -ն աղմուկի բաղադրիչն է, որը ներառում է գործոններ, որոնք դուրս են մնացել մոդելից (ենթադրվում է, որ անկախ և միանման է բաշխված):

Աղյուսակ 4-ում ներկայացված են հարկաբյուջետային միավորների տարբեր կոմբինացիաներով կառուցված մոդելների արդյունքները:

Աղյուսակ 4.

Հարկաբյուջետային միավորների տարբեր կոմբինացիաներով կառուցված 5 մոդելների արդյունքները

Փոփոխականներ	Մոդել 1	Մոդել 2	Մոդել 3	Մոդել 4	Մոդել 5
	գործակցի նշանը	գործակցի նշանը)	գործակցի նշանը)	գործակցի նշանը	գործակցի նշանը
Պետական համախառն ծախսեր/ՀՆԱ	+	+	+	+	+
ԱԱՀ/ՀՆԱ	-	չկա	չկա	չկա	-
Շահութահարկ/ՀՆԱ	-	-	-	-	-
Եկամտային հարկեր/ՀՆԱ	չկա	+	չկա	-	+
Ալցիզային հարկ/ՀՆԱ	+	+	-	+	+
Բնապահպանական հարկ/ՀՆԱ	չկա	չկա	+	+	չկա
Շրջանառության հարկ/ՀՆԱ	չկա	-	չկա	-	չկա
Այլ հարկային եկամուտներ /ՀՆԱ	-	չկա	-	+	-
R-squared	0.7526	0.2887	0.2895	0.6978	0.2787
Adjusted R-squared	0.7297	0.2228	0.2238	0.6571	0.2119
S.E. of regression	55884	94756	94701	62936	95422
Log likelihood	-738	-770	-769	-744	-770
F-statistic	32.8563	4.3843	4.4024	17.1579	4.1733
Prob (F-statistic)	0.0000	0.0021	0.0019	0.0000	0.0028
Prob(Wald F-statistic)	0.0000	0.0101	0.0008	0.0000	0.0147
Դիտարկումների թիվ	60	60	60	60	60

ՀՀ առանձին հարկատեսակների գծով հարկային բեռի ՀՀ տնտեսական աճի վրա ունեցած ազդեցության վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ գործող

ցուցանիշների առաջին տարբերությամբ կամ տվյալ հարկատեսակի գծով հարկային համախառն եկամուտ/ՀՆԱ հարաբերական ցուցանիշների լոգարիթմած արժեքի առաջին տարբերությամբ:

հարկատեսակներից տնտեսական աճի վրա բացասական ազդեցություն հնարավոր է ակնկալել հիմնականում շահութահարկի, ԱԱՀ-ի, ինչպես նաև շրջանառության հարկի գծով հարկային բեռի մասով, մինչդեռ ակցիզային հարկի, բնապահպանական հարկի, ինչպես նաև եկամտային հարկի գծով հարկային բեռը մեծամասամբ դրական է ազդում ՀՆԱ-ի վրա: Այս առումով, ստացված արդյունքները միանգամայն պատահական չեն և մեկ անգամ ևս հիմնավորում են այն կարծիքը, համաձայն որի՝ պահանջարկի ցածր ճկունություն ունեցող հարկատեսակների (ակցիզային հարկ, բնապահպանական հարկ, անշարժ գույքի հարկ, ինչպես նաև պասիվ եկամուտների գծով եկամտային հարկ) գծով հարկային բեռի բարձրացումը կարող է դրական ազդել տնտեսական աճի վրա, իսկ պահանջարկի բարձր ճկունություն ունեցող հարկատեսակների դեպքում հարկային բեռը բարձրացնելը տնտեսապես նպատակահարմար չէ:

Ատենախոսության երրորդ գլխում մեր վերլուծությունը եզարափակել ենք՝ գնահատելով ընդհանուր հարկային բեռի՝ ՀՀ տնտեսության վրա ունեցած ազդեցությունը և դրա հիման վրա՝ վերլուծելով օպտիմալ հարկային բեռի մակարդակը ՀՀ-ում:

Նշված խնդիրները լուծելու համար, մեր կողմից, որպես ուսումնասիրության օբյեկտ, դիտարկվել է Լաֆֆերի կորի գաղափարը: Լաֆֆերի կորի գաղափարի առաջին մեկնաբանությունը պատկանում է ամերկացի տնտեսագետ Ջյուդ Վանիսկիին, ով Լաֆֆերի հայեցակարգը մշակեց հարկադրույք-հարկային եկամուտներ համատեքստում:

Այս տեսանկյունից՝ Լաֆֆերի կորի հայեցակարգի շրջանակներում «հարկադրույք-հարկային մուտքեր» փոխազդող զույգի փոխարեն մենք դիտարկում ենք «հարկային բեռ-տնտեսական աճ» փոխազդեցությունը¹⁰:

«Հարկային բեռ-տնտեսական ակտիվություն» փոխազդեցությունը մենք մոդելավորել ենք՝ օգտվելով Բալացկիի կողմից առաջարկված տնտեսական աճի երկգործոն մոդելից, որում համախառն արտադրության ծավալն ունի ոչ գծային՝ քառակուսային կախվածություն հարկային բեռի ցուցանիշից՝

$$Q(\theta) = \beta_1\theta + \beta_2\theta^2 \quad (13), \text{ որտեղ՝}$$

- Q-ն համախառն արտադրության ծավալն է, θ -ն հարկային բեռի ցուցանիշն է, իսկ β_1 -ը և β_2 -ը գնահատման ենթակա գործակիցներն են:

Հավասարում (13)-ում համախառն արտադրության ծավալը կընդունի իր առավելագույն արժեքը, երբ համախառն արտադրության ծավալը ներկայացնող փոփոխականի առաջին կարգի ածանցյալը, ըստ հարկային բեռի, հավասար լինի զրոյի:

¹⁰ Балацкий Е. В., Эффективности фискальной политики государства, 2000, с. 35.

Հարկային բեռի օպտիմալ մակարդակի հաշվարկման համար անհրաժեշտ սահմանափակումը ներկայացված է հետևյալ հավասարմամբ՝

$$\Delta Q \square (\beta_1 \square 2\beta_2 \square) \Delta \square (14)^{11}$$

Հավասարում (13)-ից և (14)-ից կազմված համակարգից հետևում են հետևյալ հավասարումները՝

$$\square_{\square} \square 2Q/\square \square \Delta Q/\Delta \square (15)$$

$$\square_{\square} \square (\Delta Q/\Delta \square)/\square \square Q/\square^2 (16)$$

Հարկային բեռի օպտիմումը, հիմնվելով վերոնշյալ հավասարումների վրա, ներկայացվում է հետևյալ տեսքով՝

$$\theta^* = -\frac{\beta_1}{2\beta_2} (17), \text{ որտեղ՝}$$

- θ^* -ը հարկային բեռի օպտիմումն է, β_1 -ը և β_2 -ը Հավասարում (13)-ում հարկային բեռի և համախառն արտադրության միջև կապը բացատրող գործակիցներն են:

Հավասարում (17)-ում θ^* կետը գնահատելու համար անհրաժեշտ է գնահատել β_1 և β_2 գործակիցները: Վերջիններիս գնահատման համար հավասարումը (13)-ը հարկավոր է բերել էկոնոմետրիկական տեսքի՝

$$\Delta Q_t = \beta_0 + \beta_1 \Delta \theta_t + \beta_2 \Delta \theta_t^2 + \varepsilon_t (18)$$

Հիմք ընդունելով Հավասարում (16)-ը և օգտվելով Հավասարում (18)-ի լրամշակված տարբերակում ներկա β_1 և β_2 գործակիցների գնահատված արժեքներից՝ Լաֆֆեր օպտիմումը ընդունում է $\theta^* = 0.2519$ արժեքը, ինչը տոկոսային արտահայտությամբ կազմում է շուրջ **25,19%**:

Ըստ ստացված արդյունքների՝ ՀՀ հարկային բեռի ցուցանիշը 2020 թվականի վերջի դրությամբ ցածր է Լաֆֆերի օպտիմումի կետից ($\theta = 0.22 < 0.2519 = \theta^*$):

Աղյուսակ 5-ում ըստ տարիների ներկայացված են գործող հարկային բեռի և օպտիմալ հարկային բեռի մակարդակները 2002-2020թթ.:

¹¹ Նշված հավասարումը ներկայացնում է Հավասարում (13)-ի առաջին կարգի դիֆերենցիալը սույն մոտարկման պայմաններում՝ $dQ/\Delta Q; d\theta/\Delta \theta$.

Գործող հարկային բեռի և օպտիմալ հարկային բեռի մակարդակները 2002-2020թթ, տոկոսով

Տարի	Գործող հարկային բեռ	Օպտիմալ հարկային բեռ	Շեղումը
2002	14.26%	25.19%	10.93%
2003	14.00%	25.19%	11.19%
2004	14.00%	25.19%	11.19%
2005	14.34%	25.19%	10.85%
2006	14.26%	25.19%	10.93%
2007	16.05%	25.19%	9.14%
2008	20.35%	25.19%	4.84%
2009	19.90%	25.19%	5.29%
2010	20.21%	25.19%	4.98%
2011	20.58%	25.19%	4.61%
2012	20.59%	25.19%	4.60%
2013	21.97%	25.19%	3.22%
2014	22.04%	25.19%	3.15%
2015	21.17%	25.19%	4.02%
2016	21.31%	25.19%	3.88%
2017	20.81%	25.19%	4.38%
2018	20.91%	25.19%	4.28%
2019	22.37%	25.19%	2.82%
2020	22.41%	25.19%	2.78%

Աղյուսակ 6-ում ներկայացված է ՀՀ հարկային բեռի 2020 թվականի ցուցանիշի ($\theta_{2020}=22.4\%$) 1%-ով, 2%-ով, 2.8%-ով (մինչև օպտիմալ հարկային բեռի մոտ), ինչպես նաև 5 %-ով աճի դեպքում ՀՀ հարկային բեռի ունեցած կետային ազդեցությունը ՀՀ ՀՆԱ ցուցանիշի վրա:

Աղյուսակ 6.

Հարկային բեռի կետային ազդեցությունը տնտեսական աճի վրա՝ 2020թ.-ի հարկային բեռի ցուցանիշի համապատասխան աճի դեպքում

ՀՀ հարկային բեռի աճի սցենարներ	ՀՀ հարկային բեռի ցուցանիշը	ՀՀ հարկային բեռի ազդեցությունը ՀՀ ՀՆԱ ցուցանիշի վրա
1% աճ (22.4% => 23.4%)	23.4%	371,433.63
2% աճ (22.4% => 24.4%)	24.4%	162,966.81
2.78% աճ (22.4% => 25.19%)	25.19%	0
5% աճ (22.4% => 27.4%)	27.4%	-461710.87

Այդուսակ 6-ից պարզ է դառնում, որ չնայած ՀՀ հարկային բեռի ամեն 1%-ով բարձրացումը ունենում է դրական ազդեցություն ՀՀ ՀՆԱ ցուցանիշի վրա, բայց այդ ազդեցության աճը ՀՆԱ-ի վրա հարկային բեռի ամեն 1%-ային միավոր ավելացման հետ նվազում է: Սա նշանակում է, որ եթե հարկային բեռի մակարդակը ցածր է իր օպտիմալության կետից, ապա մինչև օպտիմալության կետը հարկային բեռի բարձրացումը դրական ազդեցություն կթողնի տնտեսական աճի վրա, սակայն ամեն լրացուցիչ բարձրացման արդյունքում հարկային բեռն իր օպտիմալ մակարդակին հասնելիս այդ ազդեցության չափը գնալով կնվազի՝ հավասարվելով 0-ի: Ընդ որում, երբ հարկային բեռը բարձրանում է 5%-ային միավորով՝ գերազանցելով օպտիմալության մակարդակը, հարկային բեռը սկսում է բացասաբար ազդել տնտեսության վրա՝ հանգեցնելով տնտեսական անկման:

Այսպիսով, Լաֆֆերի կորի գաղափարի շրջանակներում ՀՀ հարկային բեռի և տնտեսական աճի միջև փոխազդեցության վերլուծությունը ցույց տվեց, որ ՀՀ հարկային բեռը 2020թ.-ին դրական ազդեցություն է թողնել ՀՀ ՀՆԱ-ի վրա և դիտարկվող համապատասխան ժամանակահատվածում (այդ թվում՝ նաև 2020թ.-ին) ՀՀ հարկային բեռը ցածր է եղել իր օպտիմալ մակարդակից, որը նույն վերլուծության շրջանակներում գնահատվել է 25.19%: Միաժամանակ, վերլուծությունը ցույց տվեց, որ մինչև օպտիմալության կետը, հարկային բեռի բարձրացումը դրական է ազդում ՀՀ ՀՆԱ-ի աճի վրա, սակայն հարկային բեռի ամեն հաջորդ %-ային միավորի բարձրացման արդյունքում այդ աճը նվազում է՝ օպտիմալության կետում հավասարվելով 0-ի:

Ատենախոսության «**եզրակացություններ**» բաժնում հարկային բեռի հիմնախնդրի հետազոտության և դրա՝ տնտեսական աճի վրա ունեցած ազդեցության վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունների և ստացված գնահատականների արդյունքների հիման վրա կատարվել են հետևյալ եզրահանգումները.

1. Հարկային բեռը բազմաբովանդակ տնտեսագիտական կատեգորիա է, որի հստակ սահմանումը, ճշգրիտ գնահատումը, ինչպես նաև արդյունավետ կառավարումը ներկայումս մեծ կարևորություն է ստանում: Որպես հարկերի՝ տնտեսության վրա ունեցած ազդեցության բնութագրիչ, հարկային բեռը շոշափում է երկու կարևոր տնտեսական երևույթներ՝ հարկերը և տնտեսական ակտիվությունը, որոնց հիմնախնդրների ուսումնասիրությունը մինչև այժմ էլ գտնվում են տնտեսագիտական մտքի ուշադրության կենտրոնում:

2. Հարկային բեռի ձևավորման և արդյունավետ կառավարման հիմքում ընկած է կայացած և արդյունավետ գործող հարկային համակարգը: Այս առումով միջազգային փորձը վկայում է, որ այս կամ այն երկրի հարկային համակարգն արդյունավետ է գործում այն ժամանակ, երբ այն միջազգային հարկային հարաբերություններում աստիճանաբար դառնում է մրցունակ՝

միջազային կապիտալի ներգրավման և օտարերկրյա ներդրումների գրավչության համար հնարավոր նպաստավոր հարկային միջավայր ստեղծելու տեսանկյունից:

3. Հարկային համակարգի գործառնությունը մեծապես կախված է հարկային օրենսդրությունից ու դրա ճիշտ կիրառումից: Օրենսդրական փոփոխություններն այն հիմնական լծակներն են, որոնք սկզբնապես ազդելով հարկային բեռի կառուցվածքի փոփոխության վրա, վերջնարդյունքում ազդում են ամբողջ տնտեսության վրա՝ առաջ բերելով հարկային բեռի կառավարման խնդիր:

4. Հարկային բեռի արդյունավետ կառավարման նպատակով նախառաջ կարևոր է ճշգրիտ վերլուծել հարկերի՝ տնտեսության վրա ունեցած իրական ազդեցությունը՝ գնահատելով իրական հարկային բեռի մակարդակը: Հարկերի՝ տնտեսության վրա ունեցած ազդեցությունը ճշգրիտ գնահատելու համար, անհրաժեշտ է ՀՆԱ-ից բացառել դրա կազմում ներառվող այնպիսի տարրեր, որոնք իրենց վրա չեն կրում հարկերի անմիջական ազդեցությունը, մասնավորապես՝ տնտեսության ստվերային հատվածը, ինչպես նաև հարկային արտոնությունների շրջանակներում ձևավորված եկամուտները:

5. Գնահատելով տնտեսության ստվերային հատվածը, ինչպես նաև վերլուծելով հարկային արտոնությունների շրջանակներում ձևավորված եկամուտները, եկանք այն եզրակացության, որ ի տարբերություն գործող հարկային բեռի մակարդակի, որը 2020թ.-ին կազմել էր 22.41 տոկոս, իրական հարկային բեռը նույն ժամանակահատվածում գնահատվել է **31.95** տոկոս: Ընդ որում, հետազոտությունը ցույց տվեց, որ իրական հարկային բեռի մակարդակը ամենաբարձրը եղել է 2016թ.-ին՝ կազմելով **34.61%**:

6. Հարկային բեռի կառավարման սկզբնական փուլում՝ հարկային բեռը պլանավորելիս, անհրաժեշտ է հաշվի առնվի 2 կարևոր հանգամանք: Առաջինը, թե գործող հարկային բեռը օպտիմալության կետից ինչ ուղղությամբ է շեղված՝ բարձր է, թե ցածր և երկրորդ՝ որքան է այդ շեղվածության չափը: Դրա համար, նախ և առաջ, անհրաժեշտ է վերլուծել տնտեսության վրա հարկային բեռի ազդեցության բնույթը՝ պարզելու համար, թե գործող հարկային բեռը օպտիմալության կետից ինչ ուղղությամբ է շեղված, այնուհետև՝ գնահատել հարկային բեռի օպտիմալ մակարդակը՝ որոշելու համար օպտիմալության կետից գործող հարկային բեռի շեղվածության չափը:

7. ՀՀ տնտեսության վրա հարկային բեռի ազդեցության վերլուծությունը ցույց տվեց, որ դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ հարկային բեռի աճը դրական է ազդել ՀՀ տնտեսական աճի վրա և նույն ժամանակահատվածում գործող հարկային բեռը ցածր է եղել օպտիմալության կետից, հետևաբար, հարկային բեռը պլանավորելիս այլ հավասար պայմաններում առավելագույն տնտեսական աճ ապահովելու նպատակով առավել նպատակահարմար կլինի

մինչև օպտիմալության կետն աստիճանաբար բարձրացնել գործող հարկային բեռի մակարդակը:

8. Հարկային բեռի կառավարման հաջորդ փուլում, հարկային բեռի պլանավորմանը համապատասխան հարկային բեռի կառուցվածքի փոփոխություն կազմակերպելիս, անհրաժեշտ է հաշվի առնել առանձին հարկատեսակների գծով հարկային բեռի՝ տնտեսության վրա ունեցած ազդեցության վերլուծությանը՝ պարզելու համար, թե առանձին հարկատեսակների գծով հարկային բեռն ինչպիսի ազդեցություն է գործում տնտեսական աճի վրա (դրական, թե բացասական) և ելնելով դրանից որոշվում է, թե որ հարկատեսակի գծով է նպատակահամար բարձրացնել հարկային բեռը, կամ հարկատեսակներից որում է արդյունավետ իջեցնել հարկային բեռի մակարդակը:

9. Հարկային բեռի կառուցվածքի փոփոխության կազմակերպման նպատակով ՀՀ առանձին հարկատեսակների գծով հարկային բեռի ՀՀ տնտեսական աճի վրա ունեցած ազդեցության վերլուծությունը ցույց տվեց, որ ՀՀ գործող հարկատեսակներից տնտեսական աճի վրա բացասական ազդեցություն հնարավոր է ակնկալել հիմնականում շահութահարկի, ԱԱՀ-ի, ինչպես նաև շրջանառության հարկի գծով հարկային բեռի մասով, մինչդեռ ակցիզային հարկի, բնապահպանական հարկի, ինչպես նաև եկամտային հարկի գծով հարկային բեռը մեծամասամբ դրական է ազդում ՀՆԱ-ի վրա:

10. Հարկային բեռի կառավարման վերջին փուլում իրականացվում է հարկային օրենսդրության մեջ տեղի ունեցող փոփոխությունների՝ տնտեսության վրա ունեցած ազդեցության վերլուծություն, որի նպատակն է քանակապես չափել, թե հարկային օրենսդրության փոփոխություն ինչպես է ազդում տնտեսության վրա, երբ հարկային մուտքերի կազմում ակնկալվում են փոփոխություններ: Նշված նպատակին հասնելու ամենահարմար եղանակներից մեկը քեյնսյան ամբողջական պահանջարկի հիման վրա ծախսային առանձին բաղադրիչների՝ ՀՆԱ-ի վրա ունեցած ազդեցության գործակիցների, բազմարկիչների մեծության գնահատումն է:

11. ՀՀ հարկային օրենսդրության մեջ տեղի ունեցող փոփոխությունների՝ տնտեսության վրա ունեցած ազդեցության վերլուծությունը ցույց տվեց, որ ՀՀ հարկային օրենսդրության մեջ փոփոխություններ մշակելիս՝ անհրաժեշտ է իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք կավելացնեն այն ծախսային բաղադրիչները, որոնց բազմարկիչներն ունեն առավել բարձր գործակից կամ որոնք կնվազեցնեն այն ծախսային բաղադրիչները, որոնց բազմարկիչներն ունեն առավել ցածր գործակից:

Ատենախոսության հիմնական դրույթները, գիտական արդյունքներն ու նորույթներն ամփոփված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում:

1. Սարոյան Կ. Ի., Եկամտային հարկի համահարթեցման հնարավոր հետևանքների ազդեցությունը տնտեսական աճի վրա Հայաստանի Հանրապետությունում, Տարածաշրջան և աշխարհի գիտավերլուծական հանդես, Երևան, հատոր XI, N1, 2020թ., էջեր 155-162:

2. Սարոյան Կ. Ի., Հարկային բեռը և դրա գնահատման մեթոդաբանական առանձնահատկությունները ՀՀ-ում: Իրական հարկային բեռի գաղափարը, Տարածաշրջան և աշխարհի գիտավերլուծական հանդես, Երևան, հատոր XII, N3, 2021թ., էջեր 138-142:

3. Սարոյան Կ. Ի., Պատման ակնարկ հարկային բեռի տնտեսագիտական բնորոշումների վերաբերյալ, Պատմություն և քաղաքականություն գիտական հանդես, Թիվ 2 (13), Երևան, 2021թ., էջեր 50-59:

4. Սարոյան Կ., Տնտեսական աճի հիմնախնդիրը տնտեսագիտական գրականության մեջ, Այլընտրանք գիտական հանդես, Երևան, Ապրիլ-Հունիս, 2021թ., էջեր 117-125:

5. Սարոյան Կ., ՀՀ ստվերային տնտեսության գնահատումը կառուցվածքային հավասարումների մոդելավորման միջոցով, Հանրային կառավարում գիտական հանդես, Երևան, 2021թ., էջեր 130-138:

6. Սարոյան Կ., Հարկային բեռի ազդեցությունը տնտեսական աճի վրա: Օպտիմալ հարկային բեռի գնահատումը ՀՀ-ում, Հայկական տնտեսագիտական հանդես, Երևան, 2021թ. էջեր 113-130:

7. Սարոյան Կ., Խաչատրյան Վ., ՀՀ հարկային բեռի կառավարման հիմնախնդիրը ծախսային բազմարկիչների գնահատման համատեքստում, Այլընտրանք գիտական հանդես, Երևան, Ապրիլ-Հունիս, 2021թ., էջեր 63-78:

8. Mkrtchyan V., Saroyan K., Hovhannisyan M., Assessment of tax burden impact of per individual tax types on the Armenian economy, Research Center Alternative, Quarterly Academic Journal, Yerevan, January-March, 2022, pp. 115-122.

САРОЯН КАРЕН ИШХАНОВИЧ

МЕХАНИЗМЫ ВЗАИМОСВЯЗИ УПРАВЛЕНИЯ НАЛОГОВОГО БРЕМЕНИ И ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – “Экономика, управление хозяйством и его отраслями”.

Защита диссертации состоится 12-ого июля 2022 года, в 13:30, на заседании специализированного совета 015 ВАК Республики Армения по экономике, действующего в Ереванском государственном университете
Адрес: 0009, г.Ереван, ул. Х.Абовяна 52

АННОТАЦИЯ

Актуальность темы диссертации. Налоговое бремя и экономический рост постоянно находятся в сложном взаимодействии. С одной стороны, увеличение налогового бремени сдерживает деловую активность хозяйствующих субъектов и ведет к ослаблению экономической активности, с другой стороны, высокое налоговое бремя увеличивает доходы государства которые направляются на государственные расходы и увеличивают экономический рост под влиянием мультипликатора. С этой точки зрения в настоящее время очень важно оценить оптимальный уровень налогового бремени в Армении, т.е. такой уровень налогового бремени, который обеспечивает наилучшее сочетание налоговых поступлений и объёмов валовой продукции, и в этом случае, предельное или дополнительное процентное увеличение налоговой нагрузки приведет к отрицательному экономическому росту. Следовательно, актуальность темы обосновывается указанным обстоятельством.

Цель и задачи исследования. Цель исследования - выявить механизмы взаимодействия управления налоговой нагрузкой и экономического роста. Для достижения указанной цели в исследовании были поставлены и решены следующие задачи:

1. Обобщены ключевые подходы в экономике, относящиеся к налоговой нагрузке и экономического роста, а также основные особенности оценки и управления налоговой нагрузки.
2. Был обсужден международный опыт налоговых систем отдельных стран, при этом проводя параллель с налоговой системой Республики Армения.

3. Изучена налоговая система РА, ее основные особенности, а также ее роль в управлении и формировании налогового бремени.

4. С целью определения реального уровня налогового бремени была проведена оценка уровня теневой экономики в РА с помощью модели моделирования структурных уравнений MIMIC и изучена доля налоговых льгот в ВВП.

5. Для анализа влияния изменений налогового законодательства на экономику с помощью эконометрической модели SVAR были оценены величины расходных мультипликаторов ВВП.

6. Рассмотрены отдельные виды налогов РА, влияние налогового бремени на экономику, а также через эконометрическую модель оценена взаимосвязь между общим налоговым бременем и экономическим ростом.

Научные результаты и новизна исследования. В рамках исследования был выявлен реальный размер налогового бремени в РА, было показано, как эффективно управлять налоговым бременем при изменении налогового законодательства. Затем, с помощью экономической модели оценивалась взаимосвязь между налоговым бременем и экономическим ростом. На основании упомянутых исследований, получены некоторые научные результаты, имеющие теоретическое и практическое значение, из которых пункты, имеющие значение научной новизны, могут быть сформулированы следующим образом:

▮ Выдвинута концепция о реальном налоговом бремени, в рамках расчета величины которого, посредством модели MIMIC моделирования структурных уравнений, с новым подходом определяется уровень теневой экономики в Республике Армения за период в 2001 -2021гг.

▮ С помощью эконометрической модели SVAR был оценен размер фискальных мультипликаторов в Республике Армения, что продемонстрировало, как эффективно управлять налоговой нагрузкой при изменении налогового законодательства.

▮ С помощью различных структурных моделей оценивался характер влияния налоговой нагрузки по отдельным видам налогов на экономический рост в Армении, в результате чего было установлено, что налоговая нагрузка по налогу на прибыль, НДС, а также налогу с оборота, в основном, имеет негативное влияние на экономику, в то время, как налоговая нагрузка по акцизной нагрузке, экологического налога, а в некоторых случаях, подоходного налога может оказать очень положительное влияние на экономику.

▮ В рамках взаимодействия налогового бремени и экономического роста через эконометрическую модель была оценена величина оптимального налогового бремени в Республике Армения, в результате чего установлено, что уровень налогового бремени в Республике Армения ниже своего оптимального уровня

SAROYAN KAREN ISHKHAN

**Interconnection Mechanisms of Tax burden management and Economic Growth
in the Republic of Armenia**

Abstract of the dissertation for receiving the degree of the PhD in Economics for the specialty 08.00.02-“Economics, Management of the Economy and its Branches”

The defense of the dissertation will take place on July 12, 2022, at 13:30, at the Meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia at Yerevan State University
Address: 0009, Yerevan, 52 Abovyan st.

ABSTRACT

Relevance of the Thesis. The tax burden and economic growth are constantly in complicated interrelations. On the one hand, the increase of tax burden interferes with entrepreneurial activities of an economic entity and results in the decline of its economic activity, on the other hand, the increased tax load promotes the growth of state revenues, which are directed to the public expenditures and enhance economic growth upon the factor of multiplier. From this perspective, estimation of the optimal taxation level is currently becoming a priority in the RA. In other words, such taxation level should be set up, which ensures the most suitable combination of tax revenues and gross product value on the background of which the increase in the marginal or additional interest rate of the tax load will hereinafter entail to adverse economic trends. The aforementioned is a justification for the actuality of the discussed subject.

Research goal and objectives. The research goal is to identify the interaction mechanism between the tax load management and economic growth in the RA. To achieve the mentioned goal the following objectives have been put forward and handled:

1. The primary approaches available in the Economic studies related to the tax load and economic growth, as well as the main peculiarities of tax load estimation and management have been generalized and summed up.
2. Foreign practice of taxation systems for individual countries has been discussed drawing simultaneous parallels with the RA taxation system.
3. The RA tax system, its main characteristic traits, as well as its role in the tax load formation and management has been studied.
4. In order to determine the real level of the tax burden, the level of shadow/hidden economy in the Republic of Armenia was assessed through the MIMIC

model of structural equation modeling, and the share of tax benefits/reduction in GDP was studied.

5. In order to analyze the effect of legislative changes on the economy the values of GDP expenditure multipliers have been estimated through the SVAR econometric models.

6. Individual tax types in the RA, the impact of tax load per each tax type on the economy has been considered and the interrelations of total tax burden and economic growth has been evaluated by means of econometric model.

Scientific findings and novelty of the conducted research. The value of actual tax burden in the RA has been identified within the framework of the research. Tax burden efficient management ways have been disclosed in case when changes are made in the tax legislation. Then, via the econometric model the interaction between the tax load and economic growth has been estimated. Based on the mentioned studies and analyses some theoretical and applied scientific findings have been received among which the provisions manifested via the scientific novelties can be formulated as follows:

| The concept of real tax load has been deciphered and within the frame of its value estimation the level of informal economy in the RA for the period of 2001-2021 has been estimated through the new approach for MIMIC model of structural equations modeling.

| The value of tax and budgetary multipliers in the RA has been estimated through the SVAR model, by means of which the efficient management modes of tax loads under the current changes of tax legislation have been identified.

| The effect of tax burden of per individual tax types on the economic growth in the RA has been evaluated, as a result of which it has been found out that the tax burden per the profit tax, VAT (value added tax) and turnover taxes have mostly adverse effects on the economic growth, while the level of excise tax, environmental tax and in some cases also the income tax burden mainly exert favorable effects on the economy.

| The value of optimal tax burden in the RA via the econometric model has been estimated in the context of interaction between the tax burden and economic growth, in the result of which it has been disclosed that the tax burden level in the Republic of Armenia is lower than the optimal accepted level.

